

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՔԱՐՄԻԼԵ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆ**

**ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՆԱՆԵՐԻ  
ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

**ԺԳ.00. 01 «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսությամբ**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

հոգեբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Է.Ա.ԱԼԵԶՍԱՆԴՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Մ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
Լ.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 19-ին ժամը 14.00-ին իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՅ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
մանկավարժական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

Ս.Յ. ՍՎԱՋՅԱՆ

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԴՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մանկական նկարչությունը, որպես կերպարվեստային գործունեության «արդյունք», երեխայի գործունեության հետաքրքիր արտահայտություններից մեկն է: Մանկական նկարը՝ որպես գործընթաց, և նկարը՝ որպես երևույթ, մշտապես կայուն հրամայականով եղել ու մնում են որպես ուսուցման և հետազոտության օբյեկտ տարբեր գիտակարգերի և մասնագետների համար՝ արվեստաբաններ, հոգեբաններ, մանկավարժներ, սոցիոլոգներ, կենսաբաններ և այլոք: Սա բացատրվում է նրանով, որ մանկական նկարը և կերպարվեստային գործունեությունը կապված են միմյանց հետ, համարվում են երեխայի անձնավորության դրսևորման գործոն: Եվ որպես բազմագործառնական երևույթ՝ դիտվում են տարբեր անկյունադարձերով կապված նպատակից և խնդրից, որը դրված է հետազոտության առջև:

Մանկական կերպարվեստային գործունեությունը մեր կողմից ընկալվում է որպես շրջապատող իրականությունը ճանաչելու միջոց: Հավանական է, որ չկա անհրաժեշտություն ապացուցելու ստեղծագործական կարողությունների էական կախվածությունը մարդու ընկալման բնույթից: Նախադարոցական տարիքի երեխաների ստեղծագործական գործունեության ակտիվությունը խիստ կապի մեջ է գեղարվեստական ընկալման հետ: Այս իրողությունը ընդգծել են իրենց հետազոտությունների մեջ Ս. Թերոյանը, Ա. Ե. Մարտիրոսյանը, Ա. Ա. Սմիրնովը, Դ. Ն. Ուզնաձեն: Սակայն կարևոր է հաշվի առնել, որ կերպարվեստային գործունեության և գեղարվեստական ընկալման միջև գոյություն ունի բարդ հարաբերություն: Այս երկու բաղադրամասերի միջև առկա է ոչ անմիջական, այլ աննկատ, զուգորդական ներգործություն (Հ. Լ. Ներսիսյան):

Մանկական գեղարվեստական ստեղծագործությունը, որպես նրանց մտավոր կարողությունների ակտիվացման, մասնավոր նախադարոցականի ստեղծագործական ներուժը զարգացնելու միջոց, հեղինակին թույլ է տալիս բացահայտումներ անելու թեմայի թերի ուսումնասիրվածության վերաբերյալ:

Ավագ նախադարոցականների մտավոր կարողությունների ակտիվացումը կերպարվեստային գործունեության միջոցով կախված է մանկավարժահոգեբանական մի շարք գործոնների հետ, որոնք էլ հանդիսացել են տվյալ հետազոտության արդիականության բնորոշիչները:

Հետազոտության մեջ փորձ է կատարվել բացահայտել կերպարվեստային գործունեության հնարավորությունները ավագ նախադարոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների ակտիվացման, նրա գեղարվեստական ընկալունակությունը և աշխարհայեցողությունը ձևավորելու ուղղությամբ:

Վերը շարադրված տեսակետները հնարավորություն են տալիս որոշել հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, ձևակերպել նրա վարկածը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ**

Կերպարվեստային գործունեությունը որպես ավագ նախադարոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների ակտիվացման գործընթացն է:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՈՍՐԿԱՆ**

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների ակտիվացմանը միտված մանկավարժական պայմաններ են:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՍԱՍԿԸ**

Տեսականորեն հիմնավորել և գիտափորձով ստուգել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների ակտիվացման գործընթացը որպես միջոց կիրառելով մանկական կերպարվեստային գործունեությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ուսումնասիրել և բացահայտել մանկավարժության բնագավառում մանկական ստեղծագործության դրսևորումները նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների զարգացման գործընթացում:
- Սահմանել զեղարվեստական ընկալման և ստեղծագործական գործունեության փոխադարձ կապը, նրա որակական յուրահատկությունները:
- Հիմնավորել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր կարողությունների ակտիվացումը կերպարվեստային գործունեության միջոցով:
- Մշակել մտավոր կարողությունների ակտիվացմանը նպաստող միջոցներն ու ձևերը:
- Բացահայտել ավագ նախադպրոցականի կերպարվեստային գործունեության ձևավորումն ու զարգացումն ապահովվող մանկավարժահոգեբանական պայմանները:
- Վերլուծել կերպարվեստային գործունեության կառուցվածքը և բովանդակությունը նախադպրոցական տարիքում որպես երեխաների մտավոր կարողությունների ակտիվացման միջոց:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՎԱՆ ԿԱՐԿԱԾԸ** խարսխված է այն հիմքի վրա, որ կերպարվեստային գործունեության ընթացքում երեխաների մտավոր կարողությունների ակտիվացումն ավելի արդյունավետ կլինի, եթե

- Մտավոր կարողությունների ակտիվացման գործընթացը կապվի ուսումնաճանաչողական և պրակտիկ աշխատանքների հետ:
- Կերպարվեստային գործունեության մանկավարժական պայմանները համապատասխանեն սովորողների տարիքային, անհատական և հոգեբանաֆիզիոլոգիական առանձնահատկություններին:
- Կերպարվեստային գործունեությունը ընթանա համակարգված, հաշվառվի երեխաների նախասիրությունները՝ ուղղորդելով այն դեպի գիտականության սկզբունքներ:
- Մշակված լինի գործունեության համակարգը՝ կիրառելով ստեղծագործական առաջադրանքների տեսքով:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ** են հանդիսացել.

Հայրենական և արտասահմանյան մանկավարժների և հոգեբանների հետազոտություններում ներառող յուրահատուկ մոտեցումները մանկական կերպարվեստային գործունեության առանձնահատկությունների և բնույթի մասին (Ա. Բ. Բակուշինսկի, Բ.Ա.Ֆավորսկի, Ն.Պ.Սակուլինա, Լ.Ներսիսյան, Ե.Գյուլմիսարյան), մանակավարժական և հոգեբանական մոտեցումների նշանակությունը, փոխկապվածությունը մանկական նկարների և մտավոր կարողությունների զարգացման

միջև (Ս.Ռուբինշտեյն, Ա.Բ.Ջապրոժեց, Բ.Մ.Տեպլով): Մանկական կերպարվեստա-  
յին գործունեությունը դիտել որպես գեղարվեստական մշակույթի մի մաս  
(Պ.Յուսով, Ն.Ֆոմինա):

### ***ՉԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂՆԵՐԸ***

Նկատի ունենալով ատենախոսության գիտական վարկածը, նպատակը և  
խդիրները՝ վերլուծության է ենթարկվել արվեստագիտական, հոգեբանական,  
մանկավարժական և մեթոդական գրականություն, մանկավարժական գիտա-  
փորձի կազմակերպում, թեստավորում, անկետավորում և հարցում:

### ***ՉԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ***

Աշխատանքում հետազոտվում է մանկական նկարների հնարավորու-  
թյունները և հիմնավորված է դրանց ամիրաժեշտությունը մտավոր կարողությու-  
նների զարգացման գործում:

Բացահայտված է ավագ նախադպրոցական երեխաների մտավոր կարող-  
ությունների զարգացման վրա ազդող գործոնների դերն ու նշանակությունը:

Չետազոտության մեջ նկատվում է, որ երեխաների նկարների արտահայտչա-  
կանության աստիճանի բարձրացման մակարդակը պայմանավորված է մի շարք  
գործոններով.

- Երեխաների մտավոր կարողությունների զարգացման մակարդակը
- Մանկավարժական աշխատանքի ճիշտ համակարգ, որը նպատակաուղղված է բացահայտել մանկական կերպարվեստային գործունեության նկատմամբ հե-  
տաքրքրություն՝ օգտագործելով նկարչության պարապմունքները,
- Մանկավարժների կողմից գնահատման շեշտը տեղափոխել մանկական նկար-  
ների վերհիշական բնութագրման վրա՝ ստեղծագործության արդյունքը տեսնե-  
լու նպատակով,
- Որոշված է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների նկարչության  
պարապմունքների նկատմամբ համալիր մոտեցում, որն ընդլայնում է մասնա-  
գետների պատկերացումները երեխաների կերպարվեստային գործունեության  
նկատմամբ և տալիս հնարավորություն մանկական նկարների արդյունքներն  
օգտագործել մանկավարժական գործընթացում:

### ***ՉԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

Մշակված է կերպարվեստային գործունեության որոշակի մեթոդաբանական  
համակարգ, ինչը հնարավոր է դարձնում երեխաների մտավոր կարողությունների  
ակտիվացման տեսական բազայի ստեղծումը: Աշխատանքում եղած առաջարկնե-  
րը և եզրակացությունները կարող են կիրառել հետագա հետազոտողներն այդ  
խնդրում ավելի սպառնիչ արդյունքներ ստանալու համար:

### ***ՉԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

Մշակված գիտափորձարարական մեթոդիկան և մեթոդական առաջարկները  
կերպարվեստային գործունեության միջոցով ակտիվացնում են ավագ նախա-  
դպրոցականների մտավոր կարողությունները:

Առաջարկված եղանակներն ու մեթոդաբանական համակարգը կարող են  
օգտագործվել կերպարվեստի ուսուցման բնագավառում ընդգրկված մասնագետ-  
ների, ուսուցիչների և մեթոդիստների մասնագիտական որակավորման դասըն-  
թացներում:

Ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ մանկավարժական բուհերում համապատասխան դասընթացների համար, ինչպես նաև դրանք օգտակար կլինեն ծնողներին և մանկավարժներին գեղարվեստական գործունեություն իրականացնելիս նկատվող դժվարությունները կանխելու և հաղթահարելու համար:

**ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Մտավոր կարողությունների ակտիվացման գործընթացի դիտարկում, որոնք առկա են իրականության և կերպարվեստային գործունեության միջև:

2. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության կազմակերպման հնարավորությունների ուսումնասիրություն, նրանց մտավոր կարողությունների ակտիվացում, գեղարվեստի նկատմամբ առաջացող հետաքրքրությունների խորացում:

3. Կերպարվեստային գործունեության դերի հստակեցումը մտավոր կարողությունները ակտիվացնող այլ հարակից առարկաների հետ և համալիր ուսուցման պայմանների բացահայտումը նախադպրոցական կառույցներում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ**

Ուսումնասիրությունը տարվել է 2004-2010թթ.: Այն կազմված է եղել երեք փոխկապակցված փուլերից:

Առաջին փուլը (2004-2006թթ.) կրում էր որոնողական բնույթ. այս փուլում մեր առջև խնդիրներ ենք դրել հայտնաբերելու ուսումնասիրության հիմնախնդիր լուծման հոգեբանական հիմունքները և մանկավարժական հնարավորությունները, որոշելու նպաստավոր պայմանները և «Կերպարվեստային գործունեության» համալիր պարամունքների միջոցով մշակելու ավագ նախադպրոցականների մտավոր կարողությունների ակտիվացման մեթոդաբանական համակարգը:

Երկրորդ փուլը (2006-2008թթ.) գիտափորձարարական բնույթի էր: Այս փուլում երեխաների մտավոր կարողությունների ակտիվացման մշակված մեթոդական համակարգի ստուգման նպատակով կազմակերպվել է մանկավարժական գիտափորձ:

Երրորդ փուլը (2008-2010թթ.) նվիրված էր գիտափորձի արդյունքների ամփոփմանը, այն հավաստում է, որ կերպարվեստային գործունեությունը պիտի ծառայի որպես ստեղծագործական ունակությունների և մտավոր կարողությունների ակտիվացման հիմք, ինչը, անշուշտ, նոր մեթոդների ներմուծման նախապայմանն է:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

ապահովվում է տեսականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ և մեթոդների համալիր գործածությամբ, ինչպես նաև մանկապարտեզներում գեղարվեստաստեղծագործական առանձնահատկություններին համապատասխան ստացված տվյալների արժանահավատությունը: Աշխատանքի արդյունքները հավաստում են առաջարկվող մեթոդիկայի կիրառման անհրաժեշտությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ**

անց է կացվել Վանաձորի թիվ 8, 30, 34 նախակրթարաններում (2006-2010թթ.): Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական դրույթները, եզրահանգումներն ու գործնական առաջարկություններն ամփոփված են հեղինակի կողմից տարբեր հրապարակումներում:

Հիմնախնդիրը լայնորեն քննարկվել և վերլուծվել է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների» ամբիոնի նիստերում (2006-2010թթ.):

**ՀԵՏԱՉՏՈՒԹՅԱՆ ՔԱՉԱ** է հանդիսացել նախակրթարանի ավագ խումբը, ուր անց է կացվել փորձագիտությունը, կիրառվել են հեղինակի կողմից առաջադրված վարժությունները, անկետավորման և թեստավորման մեթոդները:

**Ատենախոսության կառուցվածքը** : Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից, երեխաների կողմից արված նկարներից: Աշխատանքի հիմնական ծավալը կազմում է 168 էջ (առաջին հավելված՝ 5 էջ, երկրորդ հավելված՝ 20 էջ): Գրականության ցանկում ընդգրկված են 156 անուն գրականություն:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպվում է նպատակը և խնդիրները: Ներկայացվում են նաև հետազոտության օբյեկտը, վարկածը, առարկան, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքը և մեթոդները, պաշտպանության դրույթները:

**Ատենախոսության առաջին՝ «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության հոգեբանա-մանկավարժական հիմնախնդիրները»** խորագրով գլխում բացահայտվում են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության հետ կապված հանգուցային հիմնախնդիրները: Մեր ուրոշ ապացուցային եզրահանգումները նախապատրաստող ելակետային միավորներ են դիտվել արվեստաբանական, փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական գրականության տեսական այն վերլուծությունները, որոնք մասնավորաբար վերաբերում են մանկական նկարների հիմնահարցերին՝ որպես գեղարվեստական ստեղծագործական գործունեության արդյունքի:

Մեր կարծիքով երեխան, իր զգացածը արտահայտելով նկարի մեջ, ցույց է տալիս իր վերաբերմունքը առարկայի նկատմամբ: Մանկական նկարը երեխային կարող է հաղորդել ստեղծագործական լիցք: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի մանկավարժական ղեկավարման և պահանջկոտության շնորհիվ, այն լիարժեք ձևով կհամապատասխանի պատկերվող առարկայի կամ մնուշի հատկություններին:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ երեխայի աշխարհը նկալումը, նրա տրամաբանական մտածողությունը, վերաբերմունքը շրջապատող աշխարհին հնարավորություն կտա սովորեցնել երեխաներին նկարել:

Հիմնավորված են արտահայտչականության դերը երեխաների մտավոր կարողությունների զարգացման գործում:

Նկարների արտահայտչականության մեջ մեծ տեղ են գրավում գեղարվեստական միջոցները: Հետազոտողները նշում են, որ ավագ նախադպրոցական տարիքում երեխաներն իրենց կերպարվեստային գործունեության ընթացքում օգտագործում են գեղարվեստական միջոցների լայն ընտրամի (Սակուլինա, Ֆյուրինա, Կամարովա, Կազակովա, Ժ. Աղամիրյան և ուրիշներ):

Նկարում կարևոր առանձնահատկություն է կերպավորման և արտահայտչականության միջոցների համար տարբեր նյութերի ընտրությունը: Նյութի որակը, նրա բազմազանությունը մեծ հնարավորություն են տալիս որոշելու երեխաների գեղարվեստա-ստեղծագործական զարգացման մակարդակը: Նյութը խթան է հանդիսանում կերպարվեստային գործունեության համար, հուշում է բովանդակությունը, զարգացնում է գրաֆիկան, բնանկարի կամ զարդանկարի կարողությունները: Բացի ավանդական դարձած նյութերից՝ զուևավոր մատիտներ, ֆլումաստեր, գուլաշ, ջրաներկ, որոնք նախատեսված են մանկապարտեզի դաստիարակության և ուսուցման ծրագրով, այսօր ավելացել են նաև այնպիսի նյութեր, որոնք օգտագործվում են կերպարվեստի մեջ: Նախադպրոցական տարիքում խորհուրդ է տրվում օգտագործել նաև տուշ, ածուխ, տարբեր կալիճներ:

Ըստ մեզ՝ նկարի արտահայտչականությունը բարձրացնելու նպատակով նույն նկարների մեջ կարելի է օգտագործել տարբեր նյութեր: Վերջին ժամանակներում այն օգտագործվում է խաղերի ձևով. նկարչություն մատերով, ափով, կտորով, մոմի օգնությամբ, ներկերը շաղ տալու ճանապարհով, զուևավոր թղթի վրա՝ ատամի մածուկով: Մենք գտնում ենք, որ այն նպաստում է ստեղծագործական երևակալության զարգացմանը, հարստացնում կերպարը, աշխատանքը դարձնում ավելի վառ, տպավորիչ:

Շարադրվածից կարող ենք **եզրակացնել**, որ մանկական նկարը, լինելով ստեղծագործական գործունեության արդյունք, իր մեջ կրում է գեղարվեստական կերպարի հիմնական նշանները և համարվում մանկական արվեստի ստեղծագործություն:

1. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ստեղծված յուրահատուկ կերպարները համարվում են շրջապատի իրականության համապատասխան արտացոլման ձև: Սա որոշում է երեխաների կողմից օգտագործվող արտահայտչական միջոցների յուրահատկությունը:

2. Երեխաների կողմից շրջապատող իրականությունը և արվեստի գործերի ընկալումը մեծ ազդեցություն են ունենում ավագ նախադպրոցականի մտավոր կարողությունների զարգացման վրա:

3. Մտավոր կարողությունների զարգացման և ակտիվացման գործում մեծ տեղ է հատկացվում մանկական նկարների վերլուծությանը, քննարկմանը և զնահատմանը: Դաստիարակների անհատական մոտեցումը այս աշխատանքներում ունի անգանահատելի ավանդ:

**Ատենախոսության երկրորդ՝ «Կերպարվեստային գործունեության կատարելագործման ուղիները ավագ նախադպրոցական տարիքում» գլուխը** ներկայացված է չորս ենթագլուխներով, որը թույլ է տալիս հիմնախնդրին անդրադառնալ առավել հանգամանալից:

Այն ամբողջովին կրում է փորձարարական բնույթի, որն անց ենք կացրել Վանաձոր քաղաքի թիվ 8, 30, 34 մանկապարտեզներում: Փորձարարական աշխատանքներն իրականացրել ենք արձանագրող և ձևավորող փուլերով: Ողջ փորձարարական աշխատանքն իրականացրել ենք ուսումնադաստիարակչական գործընթացի պայմաններում: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է թեստավորման, անկետավորման, հարցման, նկարների վերլուծման, խաղերի, վարժությունների մեթոդները: Անցկացված ուսումնասիրության հիման վրա հնարավոր է ձևակերպել մանկավարժական խորհրդատվություններ և ընդհանուր եզրակացություններ:

**Առաջին ենթագլխում՝ «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության ուսումնասիրումը»** (արձանագրող գիտափորձ) փորձ է կատարվել ուսումնասիրելու ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեությունը, որը նպատակ ունի որոշել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների նկարների փաստացի որակը և նրա համապատասխանությունը մեր կողմից ընտրված պատկերների չափանիշներին. ամբողջականություն, իմաստավորություն, ցայտունություն, բովանդակալից լինելը:

Ուսումնասիրությունների ընթացքում օգտագործվել են կերպարվեստային գործունեության արդյունքների վերլուծման և երեխաների հարցման մեթոդները:

Նկարների որակական վերլուծությունը ցույց տվեց, որ շատերի մոտ թեման անփոփոխ է: Երեխաներն իրենց սովորությունից դուրս չէին եկել: Նկարելիս չէին օգտագործել թեմայի շատ հարուստ հնարավորությունները, սեփական ապրումները և պատկերացումները: Մանկական նկարների ստուգումը բերեց իրենց կատարման մակարդակի շերտավորման՝ վերհիշական, պայմանական, ստուգանմուշին համապատասխան ընտրված չափանիշի: Արդյունքում չափանմուշի որակական մակարդակի նկարներ համարեցինք նրանք, որտեղ.

- ընտրված սյուժեով նկարները ամբողջական են և ավարտված,
- պարզ և հստակ կարդացվում է սյուժետային գիծը,
- գեղանկարչական երկի որոշումը, համաչափության պահպանումը, տրված է ձևը և երանգը,
- գտնված է պատկերվող կերպարի գլխավոր և երկրորդական կերպարի լավագույն հարաբերությունը:

Երեխաների նկարների վերհիշական մակարդակի զնահատման չափանիշներն են.

- հետաքրքիր մտահղացում՝ թերի մարմնավորված
- գեղանկարչական երկի արտահայտման որոշ սխալներ՝ ձևի, համաչափության մեջ, գունային որոշումներ չեն համապատասխանում երանգավորմանը
- արտահայտիչ են պատկերված միայն գլխավոր հերոսները, մյուսները նկարված են անփույթ:

Պայմանական մակարդակի գնահատման չափանիշներն են.

- սյուժեի ընտրության գործում նկատվում է դժվարություն, շատ հաճախ այն բացակայում է
- չի կարողացվում պատկերվածը, չի հասկացվում էությունը
- գունային պարզ որոշումներ
- մտածված կերպարի պայմանական պատկերում (մեկ հերոս կամ լրիվ բացակայություն):

Վերլուծությունը ցույց տվեց, որ երեխաների 23% (փորձարարական) և 31% (ստուգիչ) բարձր մակարդակով կատարել են հանձնարարությունը, որը մեր կողմից նախատեսված էր որպես ստուգանմուշ: Միջին մակարդակը (վերհիշական) համապատասխանաբար 34% և 31%: Շատ թույլ նկարներ նկատվեցին (պայմանական) երկու խմբերում էլ՝ 43% և 38%: Արդյունքը գոհացուցիչ չէր:

Տվյալներից պարզ է դառնում, որ երեխաների մեծամասնությունը, հատկապես փորձագիտական խմբում, նկարների շատ ցածր որակ է գրանցել, որն էլ մենք կապում ենք երեխաների կերպարվեստային պատկերացումների ցածր զարգացման հետ:

Այս երկու փորձարարական առաջադրանքների որակական և քանակական արդյունքների մշակումը ցույց տվեց, որ պատկերվող կերպարի որակը նկարի մեջ անմիջապես կախված է նրա մասին ունեցած պատկերացումների ձևավորման մակարդակից:

Կերպարվեստային գործունեության ընթացքում կերպարի ստեղծումը սերտորեն կապված է մտածողության հետ: Որպեսզի նկարում պատկերվի նույնիսկ ամենապարզ, հասարակ կերպար, երեխան պետք է կարողանա հասկացություններն ընդհանրացնել, համեմատել, վերլուծել: Պատկերման գործընթացը պահանջում է մի շարք մտածողական գործողություններ.

1. կարողանա մտովի պատկերացնել առարկաների կամ երևույթների նմանությունը կամ տարբերությունը, այսինքն՝ կատարի համեմատման գործողություն, 2. կարողանա մտովի իրականության մեջ միավորել առարկաների կամ երևույթների որակական նմանությունն ինչ-որ նշանի հետ, այսինքն՝ կատարի ընդհանրացման գործողություն,

3. կարողանա մտովի առանձնացնել ուսումնասիրվող առարկաների կամ երևույթների առանձին նշանները, հատկությունը, այսինքն՝ կատարի վերլուծական գործողություն,

4. կարողանա մտովի միավորել առանձին մասերի, նշանների հատկությունը մի ամբողջության մեջ, այսինքն՝ կատարի համադրման գործողություն:

Այն ամենը, ինչ գիտափորձնական առաջադրանքի ժամանակ ուսումնասիրվեց, տալիս է միայն այդ կարողությունների մոտավոր գնահատականը, քանի որ այդ գործընթացի լիարժեք և ցայտուն ընդարձակման համար պահանջվում են հատուկ պայմաններ (միջավայր, դրդապատճառ, յուրահատուկ ապրումներ, ներշնչանք): Անհրաժեշտ է նշել, որ մեր հետազոտությունը չի հավակնում պատկերացումների ձևավորման մանրամասների սպառիչ ուսումնասիրմանը:

**Երկրորդ ենթագլուխը՝** «Մտավոր կարողությունների զարգացումը կերպարվեստի պարապմունքների ընթացքում» (ձևավորող գիտափորձ),

նվիրված է մտավոր կարողությունների զարգացմանը: Առանձնացրել ենք իմացական գործունեության հետևյալ տարրերը՝ դիտողականություն, պատկերավոր հիշողություն, պատկերավոր մտածողություն և երևակայություն: Փորձարարական աշխատանքների ընթացքում առաջարկել ենք հատուկ վարժություններ, որոնք բաժանված են առանձին խմբերի: Վարժություններն ընտրելիս հաշվի ենք առնում յուրաքանչյուր երեխայի տարիքը և անհատական առանձնահատկությունները: Ամեն մի շարք նախատեսված է մի քանի պարապմունքների համար: Այն կախված է երեխաների մտավոր կարողությունների զարգացման մակարդակից, մտավոր գործունեության տիրապետման ընթացքից և պարապմունքի տեսակից: Ատենախոսության մեջ առաջարկված են մեր կողմից մշակված մի շարք վարժություններ:

Այս վարժությունների համալիրը բավականին խթանում է իմացական և ստեղծագործական երևակայության ակտիվացումը: Այս վարժությունների միջոցով մենք հասանք դրական փոփոխությունների: Մեր կարծիքով, սա տեղի է ունեցել, որովհետև երեխաները սկսել են ավելի լավ հասկանալ առաջադրանքի պահանջը, եությունը:

**Երրորդ ենթագլխում՝** «Կերպարի պատկերման ընթացքը երեխաների նկարած նկարներում», նպատակ էր դրված ստուգել երեխաների կերպարի պատկերման դինամիկայի զարգացումը և նրա ազդեցությունը նկարի որակի վրա: Երեխաների պատկերացումների ձևավորումը գիտափորձի անցկացումից հետո պետք է բավակաչափ բարձրանա: Ընկալելով կարճաժամկետ վարժությունների համալիրը՝ երեխաները ձեռք են բերում որոշակի հմտություններ և ունակություններ: Իմացական գործունեության մարզումները թույլ են տալիս նշել մեր կողմից սպասվող արդյունքները.

1. կամածին ուշադրությունը փոխարինվում է ոչ կամածնի
2. աստիճանաբար կանոնավորվում է աչքաչափը, ավելի լավ են ճանաչում գույները և նրանց երանգները, զարգանում է դիտողականությունը
3. մտապահման, պահպանման և վերարտադրման որակը ավելի է բարելավվում, ավելանում է հիշողության ծավալը
4. տեղի է ունենում դրական առաջխաղացում մտավոր կարողությունների զարգացման մեջ:
5. երեխաներն ավելի ազատ են երևակայում և ստեղծում բազմազան սյուժեներ:

Այս բոլոր վարժություններն իրականացվել են խաղերի միջոցով:

Խթանելով իմացական ակտիվությունը՝ վարժություններն ավելի կատարելագործեցին երեխաների մտավոր կարողությունները: Այդ նպատակով անցկացվեց ավարտական գիտափորձ: Մենք օգտվել ենք երեխաների նկարների վերլուծության մեթոդից, ինչպես նաև մի շարք փորձնական առաջադրանքներից մտավոր կարողությունների ակտիվացումը ուսումնասիրելու համար

Կերպարների պատկերացման ձևավորման մակարդակի նման ցուցանիշները ցույց են տալիս, որ ավագ նախադպրոցական տարիքում առաջարկվող մեթոդիկական օգտակար է կերպարվեստային գործունեության հետագա կատարելագործման համար: Մտավոր գործունեության զարգացման երկարատև և պլանա-

վորված աշխատանքը տանում է դեպի դրական տեղաշարժի: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ առանձնացնում ենք.

1. սովորեցնել երեխաներին նախօրոք մտածել կերպարի բովանդակությունը, մարմնավորման հաջորդականությունը,

2. ձևավորել կայուն մտապատկեր,

3. պատկերի ստեղծման գործուն խթանել խթանությունները, ակտիվությունը, երեխաների նախածեռնությունը,

4. խրախուսել բազմակերպար և չկրկնվող մտքերի մարմնավորումը,

5. կատարելագործել տեխնիկական կարողությունները և հմտությունները:

«Ավագ նախադպրոցականների մտավոր կարողությունների ակտիվացմանը նպաստող կերպարվեստային գործունեության կատարելագործման միջոցները» **ենթագլխում** ներկայացված է երկարամյա մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը, առաջարկվող ուղիների, միջոցների և դրանց կիրառման մանկավարժական պայմանների արդյունավետության հիմնավորումը:

Հաշվի առնելով երեխաների կերպարվեստային պատկերացումների ձևավորման գործընթացի դժվարությունները՝ մենք մշակել ենք կարճ վարժությունների համալիր, բաժանված առանձին խմբերի: Ամեն մի խումբ կազմված է առանձին վարժությունների շարքից, որոնք ուղղված են իմացական գործունեության այն բաղադրամասերի զարգացմանը, որն ընկած է ներկայացվելիք դիտողական, պատկերավոր մտածողության, պատկերավոր հիշողության, վերհիշական տարրերի և ստեղծագործական երևակայության գործընթացի հիմքում: Վարժությունների ողջ համալիրը բաժանվում է ուսումնական տարվա վրա: Այն տևում է 7-10 րոպե՝ բոլոր պարամունքների սկզբում: Վարժությունները գտնվում են փոխկապվածության մեջ: Ընթացքում դրանք ձեռք են բերում որոշակի ամբողջականություն և միասնություն: Մենք համոզվեցինք այն բանում, որ ուսուցման հաջողությունն ավագ նախադպրոցական տարիքում կախված է մտածածը ճիշտ շարադրելու կարողությունից, կերպարվեստը հասկանալուց, շրջապատող իրականությունից, հիշողությունից: Այսինքն, նկարչության գործընթացը սերտորեն կապված է պատկերավոր մտածողության և զեղագիտական ճաշակի, դիտողականության, ձեռքի շարժողական գործունեության և աչքաչափի զարգացման հետ: Կերպարների պատկերացումներն այդ գործընթացում գրավում են առաջատար տեղ՝ կատարելով միավորող գործառույթ:

1. պատկերացումները միավորում են առարկաների հատկությունները,

2. միավորում են բոլոր իմացական գործընթացները,

3. միավորում են շրջապատող իրականությունից ստացած ողջ տպավորությունը:

Առարկաների և երևույթների մասին հավաքած գիտելիքները, պատկերացումները ճշտվում են երեխաների կողմից: Եթե առարկայի մասին պատկերացումները սխալ են կամ թերի, ապա դա բավականին դժվարացնում է աշխատանքը կերպարներ ստեղծելու գործում: Կերպարվեստային գործունեության պարամունքները շատ կարևոր են առարկաների և երևույթների մասին պարզ, լրիվ և ուսմանական պատկերացումներ ձևավորելու համար:

Նկարի ստեղծման գործընթացը բաժանված է հետևյալ փուլերի՝ ծանոթանալ առարկայի կամ երևույթի հետ (զգայական գործունեության փուլ), առարկայի կամ երևույթի կերպարի պատկերացման ձևավորում (կերպարի ստեղծման մտադրության փուլ), կերպարի պատկերացման մարմնավորումը նկարում (կերպարվեստային արտահայտչամիջոցների գտնելու փուլ):

Իհարկե, նկարի ստեղծման տարբեր փուլերում այս բաղադրամասերն ի հայտ են գալիս տարբեր հարաբերությամբ: Ավագ նախադպրոցականներն անմիջապես չեն յուրացնում այս բոլոր փուլերը և հանդիպում են որոշակի խոչընդոտների: Օրինակ, հնարավոր են նման տիպի սխալներ.

1. առարկաները և երևույթներն ընկալել սխալ, որն էլ կբերի վատ պատկերացումների, արդյունքում՝ վատ նկարչություն,

2. սխալներ կերպարի ստեղծման մտադրության փուլում,

3. սխալներ կերպարվեստային միջոցների և կատարման տեխնիկայի ընտրության գործում:

Առաջարկվող միջոցները թույլ կտա խուսափել այդ սխալներից: Այս կամ այն վարժությունների շարքի օգտագործումը որոշակի փուլում հեշտացնում է երեխայի աշխատանքը: Այն նախատեսված է նկարչության բոլոր տեսակի պարապմունքների համար, ինչպես նաև տարբեր տեսակի պարապմունքների և օրվա երկրորդ կեսին կազմակերպվող խաղ-զվարձալիքների ժամանակ (գրույց-ներ, ըսկուրսիաներ, զբոսանքներ և այլն):

Ատենախոսությանն ավատվում է եզրակացություններով, որոնք աստեղծախոսության հիմնախնդրի հանգամանալից ու խորը վերլուծության արդյունքներն ու դրանցից բխող եզրահանգումներն են:

Չետազոտության արդյունքները հաստատեցին այն օրինաչափությունները, որ մանկական նկարը, որպես ստեղծագործության արդյունք, մեծ ազդեցություն ունի կերպարվեստային գործունեության նկատմամբ երեխաների հետաքրքրության բարձրացման համար: Այն ազդում է երեխաների մտահղացման մարմնավորման վրա, ընդլայնում է արտահայտչական միջոցների շրջանակը և կերպարի բովանդակության հարստացմանը ավագ նախադպրոցական տարիքում:

Չետազոտության գործընթացում բացահայտվեց, որ մանկական նկարը հանդես է գալիս որպես ինքնազմահատված ստեղծագործություն, որն իր մեջ կրում է շրջապատող իրականության յուրահատուկ կողմերը:

Մանկական նկարներին բնորոշ որակներից մենք առանձնացրել ենք արտահայտչական լեզուն, որից օգտվում են բոլոր երեխաները: Իրենց ուժերին համապատասխան արտահայտչական միջոցների օգտագործումը նախադպրոցականի համար նկարը դարձնում է հարազատ, հասկանալի և գրավող:

Չետազոտությունն ապացուցեց ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սեփական և ընկերների նկարները տեսնելու կարողությունը:

Փորձարարական աշխատանքներից ստացած տվյալները հնարավորություն ընձեռնեցին ենթադրել, որ գոյություն ունի եական կապ երեխաների նկարների ընկալման գործընթացի և անմիջական կերպարվեստային գործունեության միջև,

որն էլ որոշում է ամենից առաջ գեղարվեստական ընկալման զարգացման մակարդակը, և արտահայտել իրենց տպավորությունը սեփական նկարների նկատմամբ:

Չետագոտությունը ցույց տվեց, որ մտավոր կարողությունների զարգացման մակարդակի աճը պայմանավորված է նկարի ստեղծման գեղարվեստական արտահայտչականության տիրապետման աստիճանի որակական փոփոխմամբ: Մեր ուսումնասիրությունները պարզեցին նաև, որ մտավոր կարողությունների զարգացման մակարդակը կախված է նրա մեջ ընդգրկված գործունեության տարբեր տեսակներից գեղարվեստա-խոսքային, խաղային, թատերականացված և այլն:

Մեր կողմից առաջարկվող մանկավարժական պայմաններն ապահովվում են մանկական նկարների արդյունավետ և յուրահատուկ օգտագործումը որպես արտահայտչականության բարձրացման միջոց.

1. Մանկավարժի վերաբերմունքի փոփոխությունը մանկական նկարներին ոչ թե գիտելիքների, հմտությունների և կարողությունների տիրապետման աստիճանի տեսակետի, այլ հասկանալ և ընդունել նրանց գեղարվեստա-ստեղծագործական բնութագիրը:

2. Միավորել պարապմունքների խումբը, որն ենթադրում է ստեղծագործական խնդիրների աստիճանական լուծում և առավել յուրահատուկ ձևով այն օգտագործել մանկական գեղարվեստական աշխատանքների մեջ:

3. Մանկական նկարների օգտագործման նկատմամբ համալիր մոտեցում՝ որպես խթան մանկական աշխատանքների ստեղծագործական բնույթի բարձրացման համար:

4. Կազմակերպչական և մեթոդական բազմաբնույթ աշխատանքի ձևերի օգտագործումը մանկական կերպարվեստային ստեղծագործության ղեկավարման գործում:

5. Կերպարվեստային գործունեության մեջ հաշվի առնել տարիքային և անհատական հնարավորությունները:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Վիրաբյան Զ. Ս., Արտահայտչականությունը որպես նախադպրոցականների ինքնուրույնության զարգացման միջոց /Բանբեր, 2006, Վանաձոր, էջ 322-327:
2. Վիրաբյան Զ. Ս., Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույն կերպարվեստային գործունեությունը /«Բանբեր. գիտական աշխատություններ», Վանաձոր, 2008, էջ 339-343:
3. Վիրաբյան Զ. Ս., «Խաղ-պարապմունք» մեթոդի օգտագործումը նկարչության պարապմունքների ժամանակ /Գիտաժողովի նյութեր. Ղ.Աղայանի ծննդյան 170-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, Վանաձոր, 2010, էջ 120-125:

4. Վիրաբյան Բ. Ս., Անհատական մոտեցում երեխաներին` կերպարվեստի պարապմունքների ընթացքում / «Գեղարվեստական միտք», Երևան, 2011, թիվ 1, էջ 108-113:
5. Մտավոր կարողությունների զարգացումը կերպարվեստի պարապմունքների ժամանակ/«Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, 2012, 4-6(33), Վանաձոր, էջ 67-71:

**ВИРАБЯН КАРМИЛЕ САСУНИКОВНА**

**Изобразительная деятельность как средство активизации умственных способностей детей старшего дошкольного возраста**

**РЕЗЮМЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01.-"Теория и история педагогики".

Защита диссертации состоится 19-го декабря 2013 года в 14.00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 375010, Ереван, ул.Тигран Меци 17.

**Актуальность темы:** детское рисование как процесс и рисунок, как явление представляют собой объект изучения и исследования специалистов различных направлений: искусствоведов, психологов, педагогов, биологов, социологов и т.д. Это объясняется, прежде всего тем, что детский рисунок и изобразительная деятельность, связанная с ними, являются ключом ко многим скрытым сторонам личности ребенка и как явление многогранное и многофункциональное рассматривается с разных точек зрения в зависимости от целей и задач, стоящих перед исследователем. Проблеме восприятия разных видов и жанров искусства и влияние их на художественную деятельность детей посвящен ряд исследований (Е.Гюлмисарян, А.К.Егизарян, О.Куразян и другие). Однако эта проблема как средство активизации умственных способностей детей недостаточно изучена.

Отличительной особенностью этого подхода является то, что при нем детский рисунок выступает с одной стороны, как педагогический фактор, оказывающий значительное влияние на детское изобразительное творчество.

Рассмотрении проблемы детских изобразительных работ как объекта восприятия и как средства активизации умственных способностей детей.

В диссертационном исследовании нами рассматриваются основные возможности детского рисунка.

Изложенные выше аспекты проблемы позволили определить объект, предмет, и задачи исследования, сформулировать его гипотезу.

**Цель исследования:** теоретически обосновать и путем опытного обучения проверить активность умственных способностей детей старшего возраста, как средство детской изобразительной деятельности.

**Задачи исследования:**

1. Изучить и раскрыть детские творческие проявления умственных способностей детей дошкольного возраста в области педагогики.
2. Определить взаимосвязь между художественным восприятием и творческой деятельности и ее качественные особенности.
3. Обосновать активизацию умственных способностей детей дошкольного возраста путем изобразительной деятельности.
4. Разработать средства и формы способствующие активизации умственных способностей.
5. Раскрыть формирование и развитие, обуславливающие психопедагогические условия изобразительной деятельности детей.
6. Анализировать структуру и содержание изобразительной деятельности как средство активизации умственных способностей.

**Научная новизна исследования и теоретическое значение:** исследование заключается в том, что в работе исследована возможность и обоснована необходимость использования детского рисунка для развития изобразительного творчества ребенка. Рисунок при этом рассматривается не только как результат в изобразительного творчества, но и как возможный фактор воздействия на детскую изобразительную деятельность.

В исследовании показано, что повышение степени выразительности детского рисунка обусловлено несколькими факторами:

1. Уровнем развития умственных способностей ребенка,
2. Системой педагогической работы, направленной на повышение интереса старших дошкольников к произведениям детского изобразительного творчества через целенаправленное включение продуктов детской художественной деятельности в процесс обучения рисованию.
3. Перенос педагогом акцента в оценки с репродуктивных характеристик на продуктивные аспекты результатов его творчества.
4. Определены условия комплексного подхода к включению детского рисунка, как воздействующего фактора в обучении детей изобразительной деятельности расширяющие представления специалистов о способах использования результатов детского художественного творчества в педагогическом процессе.

**Практическая значимость исследования:** разработанная научно-экспериментальная методика и методические предложения через изобразительную деятельность активизируют умственные способности детей. Предложенные способы и формы можно использовать в области обучения рисованию, включая специалистов, учителей и методистов, проводящих курсы повышения качества преподавания. Результаты работы могут быть использованы на лекциях в педвузах и могут быть полезны для родителей и

педагогов в преодолении трудностей, связанных с изобразительной деятельностью.

**Апробация исследования:** проведена на кафедре дошкольной педагогики Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, на кафедре педагогики Ванадзорского педагогического института им. О. Туманяна.

**Структура диссертации:** Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы, списка опубликованных статей и приложений.

## VIRABYAN QARMILE SASUNIK

### **The activity of painting as a means of activation of mental abilities for pre-school age children**

The defence of the dissertation will take place at the 020 'Pedagogy' Specialised Board Session of the Supreme Certifying Commission on December 19, 2013, at 2:00 pm, at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: Tigran Mets Str. 17, Yerevan 375010.

The dissertation is stored at the library of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

The abstract has been dispatched on November 19, 2013.

#### **The relevance of the research**

Children's picture as a process, and the picture of the phenomenon was and remains a constant imperative of teaching and scientific research system and various objects for art professionals, psychologists, educators, sociologists, biologists, and others. This is explained by the fact that children's picture and painting activities are related to each other and are considered a manifestation of the child's individual factor. And as a diverse phenomenon, different terms are considered to be related to the purpose and objective, which is placed on the research front.

Children's art work is an important condition for the development of children's design outlook. In recent years, several studies have been devoted to different art forms and genres of perception and its impact on children's art activities (E. Gyulmisaryan, A. K. Yegiazarian, O. Kurazyan and others). However, children's art activities as a means of activating children's intellectual abilities, as well as its influence on the activity of art, is subject to further study.

Such a distinctive feature of this approach is that children's picture is revealed by the perception of an object and the artistic-aesthetic phenomenon, on the other hand, as a teacher, preschool-aged children with intellectual capacity factor activation process.

In this research the exploration was done to reveal the possibilities of the activities of the art and to show preschool-aged children's activation of mental abilities, as well as their artistic value.

The views outlined above allow us to define the object of study, subject, purpose, objectives, formulate a hypothesis.

#### **The research aim**

To develop grounded theory and experiments to test the intellectual abilities of preschool children with high activation in the visual arts as a means of using children's activities.

### **The main objectives of the research**

- To explore and discover the pedagogical work in the field of children's mental abilities of preschool-age children development process;
- To determine the relation between artistic perception and creative activity, its qualitative characteristics;
- To demonstrate high intellectual abilities of preschool children in the activation of fine arts activities;
- To develop a means of contributing to the activation of mental abilities and forms;
- To identify the formation and development of fine arts activities of preschool children in Pedagogy provided conditions.
- To analyze the structure and content of the painting as a child of preschool-aged child's, mental capacity activation tool.

### **The scientific novelty and theoretical significance of the research**

Children's art work explores the possibilities and justifies the need for the development of mental abilities.

In this research we have revealed pre-school children high intellectual capacity factors influencing the role and importance.

In the research it has been observed that the increase of expressive level of children images depends on a number of factors:

1. The level of mental development of children,
2. Correct system of teaching, which aims to identify the child's interest in using fine art painting lessons,
3. Children's art educators are to remember the characteristics of the current emphasis on work in order to see results,
4. Determined by drawing lessons from pre-school-age children in the complex approach that expands professionals' perceptions of children painting, children's art activities, and the ability to use the results of the educational process.

### **Practical significance of the research**

In the research we have developed scientific experimental methodology and guidance for preschool arts activities through activating the mental capacity.

The proposed methods and forms (methods) system can be used for professionals involved in the field of art education, Teachers Training and qualification courses.

The obtained results can serve as a basis for teaching courses in the universities, as well as they will be useful for parents and teachers to prevent and overcome the difficulties which are observed during the artistic activity.

### **Aprobation of the research results**

The Chair of Pre-school Pedagogy at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, the Chair of Pedagogy at the Pedagogical Institute after H. Tumanyan in Vanadzor. Some of the results of the study have been published in journals.

**Dissertation Structure:** The work consists of the introduction, two chapters, conclusion, references, appendixes, children's picture: The main volume of 168 pages (the first page of Appendix 5, Appendix II, page 20) includes the list of 156 names of the used literature sources.

A handwritten signature in blue ink, appearing to read 'Ghuc', is centered on the page.